ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի մայիսի 31-ի հայտարարության կապակցությամբ Հանրային հեռուստաընկերության դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

2021թ. մայիսի 30-ին Հայաստանի հանրային հեռուստատեսության «Կիրակնօրյա լուրեր» ծրագրով հեռարձակվել է «Հայկական և ադրբեջանական անկլավների հարցի իրավական և քաղաքական բաղադրիչը» ռեպորտաժը, որտեղ ներկայացվում է Խորհրդային Միության ժամանակ երկու երկրներում եղած անկլավների հարցի ներկա վիճակը՝ իրավական և քաղաքական տեսանկյունից:

Այս ռեպորտաժի հեռարձակման հաջորդ օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը հանդես է եկել հայտարարությամբ, որով խիստ դատապարտելի է համարել «ռեպորտաժի շեշտադրումները»:

ՄԻՊ-ը կարծում է, որ առանց հաշվի առնելու ԽՍՀՄ տարիների պատմական փաստերը՝ ռեպորտաժում Տիգրանաշեն և մի քանի այլ գյուղեր որպես «ադրբեջանական անկլավներ» են ներկայացվում, ինչն, ըստ նրա, երկրում ստեղծված բարդ իրավիճակում հակասում է ՀՀ սահմանային բնակիչների իրավունքներին ու նպաստում է նրանց և ՀՀ սահմանային անվտանգության խաթարմանը: Դա ՄԻՊ-ը դիտարկել է որպես «բացահայտ ոչ մասնագիտական, մեխանիկական մոտեցումներ ու ակնհայտ սխալ ձևակերպումներ» և Հանրային հեռուստաընկերությանը պահանջ է ներկայացնում «ՀՀ սահմանային բնակիչների իրավունքներին վերաբերող նյութեր

պատրաստելիս ղեկավարվել բացառապես մասնագիտական մոտեցումներով»։

2021թ. հունիսի 2-ին իր կայքում Հանրային հեռարձակողի խորհուրդն իր հերթին հանդես եկավ հայտարարությամբ՝ պնդելով, որ Մարդու իրավունքների պաշտպանը գերազանցել է իր լիազորությունները, իսկ վերջինիս հայտարարությունը համարել է բացահայտ միջամտություն լրատվամիջոցի գործունեությանը։

Ռեպորտաժի մասին անկողմնակալ մասնագիտական կարծիք ստանալու և հանրությանը ներկայացնելու համար Խորհուրդը Հանրային հեռուստաընկերությանը հորդորել է դիմել ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին։

2021թ. հունիսի 3-ին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել երկրորդ հայտարարությամբ, որտեղ մի շարք հարցադրումներ է կատարել Հանրային հեռուստաընկերությանը՝ այն հիմնավորմամբ, որ ռեպորտաժում առկա «պատմական փաստերի բացահայտ աղավաղումները, սահմանային բնակիչների իրավունքներն ու նրանց անվտանգությունը բացահայտ անտեսող խիստ դատապարտելի, պատմությունից դասեր չքաղած ու ակնհայտ ոչ մասնագիտական մոտեցումներն են, որ տասնամյակներ շարունակ մեզ զրկել են ՀՀ և նրա քաղաքացու իրավունքներն ու շահերը պաշտպանելու իրավական հիմքերից՝ վտանգելով ՀՀ սահմանների անվտանգությունը»։ ՄԻՊ-ը, տալով համապատասխան հղումները, այս երկրորդ հայտարարության անհրաժեշտությունը հիմնավորում է նրանով, որ իրենց ուսումնասիրություններով, բազմաթիվ ադրբեջանական լրատվամիջոցներ հանրային են դրել խնդրո առարկա ռեպորտաժը՝ «արձանագրելով, որ Հայաստանում պետական մակարդակով ընդունում են, որ նշված գյուղերը պատկանում են Ադրբեջանին»։

Արդեն այս հայտարարությունից հետո, 2021թ. հունիսի 11-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է Հայաստանի Հանրային հեռուստաընկերության դիմումը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի 2021թ. մայիսի 31-ի հայտարարության կապակցությամբ խնդրելով տալ մասնագիտական կարծիք՝ Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարության հիմնավորվածության մասին և արձանագրել լրատվամիջոցի գործունեությանը միջամտելու փաստը։

2021թ. հունիսի 15-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն անցկացրեց այս հարցով առցանց քննարկում, որին, համաձայն ԴՄ աշխատակարգի 3-րդ կետի (Դիտորդ մարմնում քվեարկության որոշումներ ընդունելու կարգը) 3.5. ենթակետի

(ԴՄ-ում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն կամ շահերի բախում ունեցող ԴՄ անդամը պարտավոր է քննարկումից առաջ այդ մասին տեղեկացնել ԴՄ համակարգողին՝ հրաժարվելով տվյալ նիստին մասնակցելուց), քննարկմանը չմասնակցեց Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Արա Շիրինյանը։

Հարկ է նշել, որ վերջին շրջանում ցավալիորեն արձանագրվում են այս երկու կառույցների միջև երբեմն խիստ ընդգծված հակասություններ։ Մասնավորապես, դրա դրսևորումներն էին Հանրային հեռուստաընկերությանը վերաբերող ՄԻՊ-ի քննադատական ելույթը ՀՀ Ազգային ժողովում, այնուհետև վերջինիս հետ թեժ բանավիճային ոճով անցկացրած հարցազրույցը Հանրայինի եթերում, որոնք անցանկալի նախապատմություն և համատեքստ դարձան սույն դիմումի ծագման և հակասությունների առավել խորացման համար։

Մինչդեռ՝

- համարելով, որ ՄԻՊ-ը և Հանրային հեռուստաընկերությունը ունեն փոխլրացնող առաքելություն, դրանց գործունեության արդյունավետությունն առավել ապահովված կլինի համագործակցության պայմաններում,

- ամենևին չհավակնելով դատել, թե կողմերից ում նախաձեռնությամբ են առաջացել և հետագայում գեներացվել վերոնշյալ հակասությունները,

- հետևելով սեփական աշխատակարգի մեջ 2021թ. մայիսի 15-ին կատարված փոփոխությամբ ամրագրված 4.10. դրույթին (այն է՝ «Դիտորդ մարմինը քննության է առնում տեղեկատվության ոլորտում պաշտոնապես գործունեություն իրականացնողների մասնակցությամբ տեղեկատվական վեճերը և ըստ անհրաժեշտության հանդես է գալիս հայտարարությամբ կամ պատրաստում և հրապարակում է փորձագիտական կարծիք»),

ԴՄ-ն նպատակահարմար գտավ մշակել փորձագիտական կարծիք այս հարցով, քանի որ վերջինս իր անդրադարձը կարող է ունենալ ԶԼՄ-ների և, մասնավորապես, Հանրային հեռարձակողի գործունեության էթիկական բաղադրիչի վրա։

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

4.2. Այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

6.4. Քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

II. **ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ**

4.10. Դիտորդ մարմինը քննության է առնում տեղեկատվության ոլորտում պաշտոնապես գործունեություն իրականացնողների մասնակցությամբ տեղեկատվական վեճերը և ըստ անհրաժեշտության հանդես է գալիս հայտարարությամբ կամ պատրաստում և հրապարակում է փորձագիտական կարծիք:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

հաշվի առնելով և գնահատելով

- որ Հանրային հեռուստաընկերությունը չի խուսափում հանրության և մասնագիտական հանրույթի կողմից իր հասցեին քննադատությունները լսելուց և ընդունելուց, պատրաստակամ է լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության, ինչպես նաև այն, որ լրատվամիջոցը այդպիսով պատասխանատվություն է կրում խոսքի ազատության և մարդու մյուս հիմնարար իրավունքների միջև հակասության պայմաններում ընտրություն կատարելու իր որոշման համար,

- Հանրային հեռուստաընկերության և տեղեկատվության ոլորտում գործունեություն իրականացնող այլ սուբյեկտի մասնակցությամբ տեղեկատվական վեճի վերաբերյալ մասնագիտական կարծիքի համար ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին դիմելու և դիմումը քննարկելու նախադեպը,

- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետևողական

և արդյունավետ աշխատաքը Հայաստանում խոսքի ազատության և բազմակարծության զարգացման ուղղությամբ,

արձանագրում է.

1. Թեպետ, ՄԻՊ-ը առաջին հերթին մտահոգություն է հայտնում խնդրո առարկա ռեպորտաժում ներկայացված փաստական տվյալների և օգտագործված եզրույթների կապակցությամբ, այնուամենայնիվ, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն իրեն իրավունք է վերապահում իր լիազորությունների շրջանակում անդրադառնալ առավելապես էթիկական խնդիրներին՝ այդ թվում խոսքի ազատության ու մարդկանց տեղեկացված լինելու իրավունքի և մարդու մյուս հիմնարար իրավունքների միջև հնարավոր հակասության դեպքում լրատվամիջոցի՝ ինքնուրույն վճիռ կայացնելու և դրանից բխող պատասխանատվություն ստանձնելու վերաբերյալ։

2. ՄԻՊ-ն ունի Հանրային հեռարձակողի գործունեության մասին իր դիրքորոշումն ու վերաբերմունքը արտահայտելու բոլոր հիմքերը՝ ելնելով իր առաքելությունից և այն փաստից, որ քննադատության արժանացած հեռուստաընկերությունը հանրային կառույց է և գտնվում է ՄԻՊ-ի դիտարկումների տիրույթում, հետևաբար վերջինս արտահայտել է իր իրավաչափ մտահոգությունը՝ ոչ միայն արդեն իսկ պատճառված, այլ նաև հնարավոր վնասի շուրջ։

3. Մյուս կողմից՝ Հանրային հեռուստաընկերությունն իրավունք ունի իրականացնելու ինքնուրույն խմբագրական քաղաքականություն, որը ենթադրում է անդրադառնալ հասարակությանը հուզող բոլոր կենսական, արդիական թեմաներին՝ այդուհանդերձ հաշվի առնելով լսարանի հոգեբանական և հուզական վիճակը։

4. Ե՛վ Հանրային հեռուստաընկերությունը, և՛ Մարդու իրավունքների պաշտպանը հանրային ինստիտուտներ են և հասարակության առջև կրում են որոշակի պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր առաքելությունների և լիազորությունների շրջանակներում։ Այս կառույցների արդյունավետ համագործակցությունից է կախված երկուսի դերի բարձրացումը, երկրում ժողովրդավարական սկզբունքների ամրապնդումը և մարդու իրավունքների պաշտպանվածությունը։

5. Զանգվածային լրատվամիջոցները կոչված են անդրադառնալու և լուսաբանելու ցանկացած արդիական, առավել ևս՝ ամենասուր թեմաներն ու ամենամտահոգիչ հիմնախնդիրները։

6. Միևնույն ժամանակ, հատկապես անվտանգությանը

վերաբերող, հանրային կյանքի այլ չափազանց զգայուն հարցերում ԶԼՄ-ները պետք է հնարավորինս խուսափեն դառնալ որևէ կողմի՝ իշխանության, ընդդիմության կամ այլ սուբյեկտի քարոզչության գործիք։

7. Խնդրո առարկա ռեպորտաժի շեշտադրումները, հնչած եզրույթները և ուղերձները կարող էին ընկալվել որպես ՀՀ իշխանության քողարկված քաղաքականության արտացոլում, և այդ ընկալմանը կամա թե ակամա նպաստում էին ՀՀ ՄԻՊ-ի հայտարարությունները։ Սակայն առանց ապացուցողական հիմքերի ՄԻՊ-ի կողմից նման ենթադրությունների հրապարակային տարածումը խնդրահարույց է և ռիսկեր է պարունակում՝ թեմայի վերաբերյալ հանրությանը համարժեք իրազեկելու տեսակետից։

Ամփոփելով դիմումի վերաբերյալ իր փորձագիտական կարծիքը, Դիտորդ մարմինը

համարում է, որ

- ՄԻՊ-ը հիմքեր ուներ հատուկ ուշադրություն դարձնելու Հանրային հեռուստաընկերության 2021թ. մայիսի 30-ի ռեպորտաժին և անհամաձայնություն հայտնելու նրանում տեղ գտած տեղեկությունների և օգտագործված եզրույթների վերաբերյալ։ Մասնավորապես, նկատի ունենալով 44-օրյա պատերազմից հետո երկրում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը, ինչպես նաև ներկայումս ՀՀ սահմաններին տիրող իրավիճակը՝, մտահոգություն կարող էին առաջացնել «ադրբեջանական անկլավ» բառակապացությունը և նյութի մատուցման հետ կապված որոշ այլ նրբերանգները։

- Միևնույն ժամանակ, թեմային համապարփակ կերպով և բավարար խորությամբ չանդրադառնալու վերաբերյալ ՄԻՊ-ի գնահատականները կարող են ընկալվել որպես միջամտություն լրատվամիջոցի խմբագրական քաղաքականությանը։ Հանրային հեռուստաընկերությունը մեկ ռեպորտաժում հնարավորինս ներկայացրել է խնդիրը։ Ողջամիտ է ակնկալել, որ դրա մյուս ասպեկտերին Հ1-ը կարող է անդրադառնալ հետագայում՝ զարգացնելով թեման և խնդիրը ներկայացնելով տարբեր կողմերից։

- Վեճի կողմեր հանդիսացող երկու կարևորագույն կառույցների որոշակիորեն սրված հակասությունները, որոնք, հնարավոր է նաև, առաջացել են վերը նկարագրված փոխըմբռնման պակասից, չեն նպաստում հանրային կյանքում ծագած բարդ խնդիրները մեղմելուն կամ լուծելուն, մինչդեռ նրանց սերտ համագործակցությունը հատկապես կարևոր է երկրում ստեղծված

իրավիճակում: Հետևաբար, ելնելով այդ կառույցների կարգավիճակից և առաքելությունից, ՄԻՊ-ի և Հանրային հեռուստաընկերության միջև առաջացած հակասությունները չպետք է կրեն այնպիսի սկզբունքային բնույթ, որ առաջանա սուր հրապարակային բանավեճի անհրաժեշտություն:

- Աշխատանքի արդյունավետության համար՝ ընդհանրապես, և կոնկրետ այս կարծիքի մշակման առիթ հանդիսացած վեճի դեպքում՝ մասնավորապես, երկու կարևորագույն հանրային ինստիտուտների և դրանց ղեկավարների ու ներկայացուցիչների միջև ծագած խնդիրները կարող էին լուծվել գործընկերային մթնոլորտում:

Դիտորդ մարմինը կոչ է անում

ՄԻՊ գրասենյակին և Հանրային հեռուստաընկերությանը՝ համաձայնեցնել խորհրդատվական ձևաչափ՝ համատեղ հետաքրքրություն առաջացնող հարցերի քննարկման ու ընդհանուր մոտեցումներ մշակելու համար: Դա մեծապես կնպաստի ինչպես Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ հանրությանը բազմակողմանի և հավասարակշռված տեղեկատվություն մատուցելու գործին:

Ընդունվել է 2021թ. հուլիսի 12-ին՝

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ, Երևանի Հովհաննես Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: